

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը մասնակցել է <<Զվարթնոց վերածնունդ>> հայ երգի մրցույթ-փառատոնի մարզային փուլին

Օրերս Վայքի մշակույթի տան փոքր դահլիճում <<Զվարթնոց վերածնունդ>> հիմնադրամի նախաձեռնությամբ կայացավ հայ երգի մրցույթ-փառատոնի մարզային փուլը, որին ներկա էին Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը և մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Արփիար Ղազարյանը, դպրոցների տնօրեններ, ծնողներ, դպրոցականներ: Մրցույթին մասնակցում էին մրցույթ-փառատոնի առաջին և երկրորդ փուլերում հաղթած 12 շնորհալիներ, որոնք ներկայացնում էին մեկական դասական, աշուղական, ժողովրդական և հոգևոր երգերի կատարումներ: Մասնագիտական ժյուրին, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պոֆեսոր Սամվել Գալստյանի նախագահությամբ, մասնակիցներին պարզևատրեց մասնակցության վկայականներով, իսկ 8 առավել աչքի ընկած մասնակիցների շնորհեց մրցույթի հանրապետական փուլին մասնակցելու իրավունք:

Վերջում <<Զվարթնոց վերածնունդի>> հիմնադիր Սուսաննա Բաղդասարյանը մրցույթի մարզային փուլի կազմակերպչական աշխատանքներին աջակցելու համար շնորհակալագիր փոխանցեց ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանին, արտահայտելով մրցույթի կազմակերպչական խմբի երախտագիտությունը: